

ՆՈՐ ԲԱՅԱԶԷՏԻ ԳԱԽԱՌ ԿԱՏ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

Ե. ԼԱՆԱՅԵԱՆԻ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ



ԳԱԽԱՌԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Նոր-Բայազէտի գաւառն այժմ բաժանուած է չորս ոստիկանական շրջանների: Առաջին ոստիկանական շրջանը տարածւում է գաւառի արեւմտեան մասում, կենդրոնատեղին է Ներքին Ախտան և բռնում է 101,268 ղեսիատին, 2120 ք.ս. տարածութիւն. ունի 6 գիւղական հասարակութիւն, բաղկացած 41 գիւղերից 4629 ծխով:

Երկրորդ շրջանը տարածւում է Սեւանյ լճի արեւմտեան ափին, կենտրոնատեղին է Նոր-Բայազէտ քաղաքը և բռնում է 45,298 ղ. 164 ք. ս. տարածութիւն. ունի 3 գիւղական հասարակութիւն, բաղկացած 21 գիւղերից, 3404 ծխով:

Երրորդ շրջանը տարածւում է նոյն լճի արեւմտահարաւային ափերին, կենտրոնատեղին է Ներքին Ղարանլուղ գիւղը և բռնում է 50,570 ղ. 1670 ք. ս. տարածութիւն. ունի 3 գիւղական հասարակութիւն, բաղկացած 24 գիւղերից, 3891 ծխով:

Չորրորդ շրջանը տարածւում է լճի արեւելեան և արեւելահիւսիսային ափերին, կենտրոնատեղին է Բասարգեչար գիւղը և բռնում է 84316 ղ. 1844 ք. ս. տարածութիւն. ունի 4 գիւղական հասարակութիւն, բաղկացած 49 գիւղերից, 5395 ծխով:

Հետևապէս և ամբողջ գաւառը, որի կենտրոնատեղին է Նոր-Բայազէտ քաղաքը, բռնում է 577,585 ղեսիատին, 710 ք. սաժէն տարածութիւն, ունի մի քաղաք և 16 գիւղական հասարակութիւն, բաղկացած 135 գիւղերից 17219 ծխով:

Հնումը այս գաւառը կազմում էր մեծ մասամբ Սիւնեաց նահանգի Գեղարքունիք ու Սող կամ Սոթք, և Արարատեան նահանգի Վարաժնունիք, Արեւելեան Նիգ և Մազազ գաւառները: Գեղարքունիքը համարւում էր Սեանայ լճի արեւմտահարաւային ափերը, որ ստորաբաժանւում էր Մակ-գաւառ և Կոթ կամ Կըռ-դաբակ գաւառակների. առաջինը բռնւում էր լճի արեւմտեան, ժմակային մասը (որի հակառակ՝ արեւելահայեաց մասը կոչուել է Արեգունի, Գիւնէյ), իսկ երկրորդը՝ հարաւային մասը: Սոթք գաւառը բռնել է լճի արեւելեան և հիւսիսային մասը և ստորաբաժանուել է՝ բուն Սողի՝ որ բռնել է այժմեան Զոդի դաշտավայրը, Արտից-գաւառի կամ Ծարի, այժմեան Մազրայի դաշտավայրը, Փորակի, որ հաւանօրէն ընկել է Սողի և Արտից-գաւառի միջև, այժմեան Գիւլի գետի և լճակի մասը, Երիշատի, որ հաւանօրէն այժմեան Ելլիջա Կարակոյիւնլու գիւղի և նրա շրջակայքն է բռնել և Ջաղացաձորի, որի տեղը նոյն իսկ հաւանօրէն յայտնի չէ:

Լճի հիւսիս-արեւելեան ափերը ևս, որ յայտնի է Արեգունի կամ այժմ Գիւնէյ անունով, հաւանականօրէն Սոթքի մի գաւառակն է կազմել:

Արարատեան նահանգից Վարաժնունիքը բռնել է դաւառի արեւմտահիւսիսային մասը, այժմեան Դարաչիշակը կամ Ծաղկաձորը, Արեւելեան Նիգը՝ նրա արեւմտեան սահմանը՝ այժմեան Բջնի գիւղը, և Մազազը՝ գաւառի արեւմտահարաւային մասը՝ այժմեան Քեանքեանի գիւղական հասարակութիւնը:

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏ ՔԱՂԱՔ

Գաւառի կենդրոնը համարւում է Նոր-Բայազէտ քաղաքը: Սա տեղաւորւած է Սեանայ լճի արեւմտեան ափին, ($62^{\circ} 47' 20''$ — $40^{\circ} 21' 25''$) նրանից մօտ 6 կիլոմետր հեռու, մի զոգաւորութեան մէջ: Բռնւում է 96 դես. 2216 ք. ս. տարածութիւն, որից 82 դես. 1344 ք. ս. ծածկուած է շինութիւններով: Քաղաքի հարաւային կողմում հոսում է Քաւառ գետը կամ Գաւառագետը, որի վրայ մի քարաշէն կամուրջ կայ, 1867 թուին Գ. Գորոյեանի ծախքով կառուցուած: Գետի ձախ ափին և քաղաքի արեւելահարաւային կողմում բարձրանում է մի բլուր, որի վրայ հնումը եղել է մի ամրոց, իսկ յետոյ և այժմ դերեղմանատուն: Դեռ ևս նկատելի են այդ հին ամրոցի հետքերը. կայ նաև մի ստորերկրեայ անցք, որ աւանդութեան ասելով ամրոցի միջից իջել է մինչև գետը: Բլրի վրայ մնացել են հին շինութեան հետքեր,